28 փետրվարի 2013 թվականի N 189 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 81-Ն, N 82-Ն ԵՎ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 84-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գնով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 81-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ, 3-րդ կետերում, 5-րդ կետի 1-ին և 9-րդ ենթակետերում «17041300.0» թիվը փոխարինել «17343530.0» թվով.

2) 5-րդ կետի 9-րդ ենթակետում «հունիսի» բառը փոխարինել «հուլիսի» բառով.

3) աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ԳՆՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Մարզի անվանումը	Դիզելային վառելանյութի՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար հատկացված քանակը (լիտր)
1	2
Արագածոտն	995000
Արարատ	1873500
Արմավիր	2342000
Գեղարքունիք	4098500
Լոռի	1171000
Կոտայք	403000
Շիրակ	3513000
Սյունիք	1463800
Վայոց ձոր	632000
Տավուշ	761200
«Գյումրու սելեկցիոն կայան» ՓԲԸ	11700
«Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ	2300
«Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	1700
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	35130
ՀՀ արդարադատության նախարարության «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ	4000
ՀՀ Արագածոտնի մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն	2000
ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն	3000
ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն	2200
ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն	4000
ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն	10000
ՀՀ Կոտայքի մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն	2000
ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն	5000
ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն	5000

1	2
ՀՀ Տավուշի մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն	2500
Ընդամենը	17343530

»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գնով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 82-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետի 1-ին ենթակետում, 5-րդ կետի 2-րդ և 9-րդ ենթակետերում «27167» թիվը փոխարինել «31298» թվով.

2) 5-րդ կետի 9-րդ ենթակետում «հունիսի» բառը փոխարինել «հուլիսի» բառով.

3) աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարզի անվանումը	Ազոտական պարարտանյութի՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար հատկացված քանակը (տոննա)
1	2
Արագածոտն	3600
Արարատ	4970
Արմավիր	7000
Գեղարքունիք	3500
Լոռի	2500
Կոտայք	1675
Շիրակ	4200
Սյունիք	2000
Վայոց ձոր	480

1	2
Տավուշ	400
Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն	900
«Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ	15
«Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	2
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	50
ՀՀ արդարադատության նախարարության «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ	6
Ընդամենը	31298

»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 84-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «3,016,605,725.0» թիվը փոխարինել «3,234,957,800.0» թվով.

2) որոշման 1-ին կետի՝

ա. 1-ին ենթակետում «1,789,336,500.0» թիվը փոխարինել «1,821,070,650.0» թվով,

բ. 2-րդ ենթակետում «1,056,117,125.0» թիվը փոխարինել «1,216,709,750.0» թվով,

գ. 3-րդ ենթակետում «171,152,100.0» թիվը փոխարինել «197,177,400» թվով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ